ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՅՏԻ/ԾՐԱԳՐԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Պետական մարմնի անվանումը՝ Էկոնոմիկայի նախարարություն

Ամփոփաթերթի կազմման ամսաթիվը՝ 03.04.2024

#	Դիտողության/ առաջարկի բովանդակությունը	Առնչվող ոլորտը, ծրագիրը, միջոցառումը	Դիտողության/ առաջարկի հեղինակը	Դիտողության/ առաջարկի ներկայացման ամսաթիվը	Պետական մարմնի դիրքորոշումը/ արձագանքը դիտողության/ առաջարկի վերաբերյալ	Դիրքորոշման ներկայացման ամսաթիվը
1	2	3	4	5	6	7
1.	Առաջարկվում է զբոսաշրջային գրավչություն ունեցող վայրերի զարգացում կոնկրետ մարզի օրինակով /ծրագրում ներառված չեն տարածաշրջանային ինստիտուցիոնալ զարգացման հատվածները/	1190-Զբոսաշրջության զարգացման ծրագիր	Սերգեյ Շահվերդյան	28.03.2024	Քննարկման ընթացքում առաջարկի հեղինակին ներկայացվել է 1190 - Զբոսաշրջության զարգացման ծրագրի «12002-Զբոսաշրջության և ենթակառուցվածքների բարելավում» միջոցառումը, որով նախատեսվում է կլաստերային համակարգի ներդրում: Ուստի, ծրագրում արդեն իսկ ներառված է քննարկման մասնակցի կողմից ներկայացված	28.03.2024

					առաջարկը:	
2.	Միջոցառումը երկարաժամկետ է, սակայն չի լուծում կարճաժամկետ խնդիրները, առաջարկվեց մշակել կարճաժամկետ ծրագիր օրվա խնդիրները հասկանալու և լուծելու նպատակով:	1190-Զբոսաշրջության զարգացման ծրագիր	Սերգեյ Շահվերդյան	28.03.2024	Քննարկման մասնակցի կողմից բարձրաձայնված հարցերը, կապված ճանապարհների բարեկարգման, ցուցանակների, այդ թվում՝ զբոսաշրջային ցուցանակների առկայության և տեղադրման հետ, դուրս են ՀՀ էկոնոմիկայի նախարարության և Զբոսաշրջության կոմիտեի գործառույթների շրջանակից: Այնուամենայնիվ, Զբոսաշրջության կոմիտեն համագործակցում է շահագրգիռ մարմինների հետ (ՏԿԵՆ, ԿԳՄՍ, մարզպետերի աշխատակազմեր), ըստ առաջնահերթության, ցուցանակների տեղադրման, ճանապարհների բարեկարգման աշխատանքների հարցերը կարգավորելու ուղղությամբ:	28.03.2024
3.	Առաջարկվեց ուշադրություն դարձնել կադրային հարցին,	1190-Զբոսաշրջության զարգացման	Վլադիմիր Գրիգորյան	28.03.2024	Քննարկման ընթացքում առաջարկի հեղինակը տեղեկացվել է, որ 1190-	28.03.2024

	քանի որ մոտ ապագայում լուրջ խնդիր է լինելու համապատասխան կադրերի բացակայությունը, մասնավորապես մի քանի առանձնահատուկ ոլորտների մասով:	ծրագիր			Զբոսաշրջության զարգացման ծրագրի 11002-Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը միջոցառումն արդեն իսկ ներառում է զբոսաշրջության ոլորտում կրթության բարելավման բաղադրիչ, ինչը ներառում է նաև զբոսաշրջության ոլորտում վերապատրաստումներին աջակցության բաղադրիչ:	
4.	Ծրագիրը կազմելիս ո՞ր երկրներն են դիտարկվել որպես թիրախային շուկաներ, առաջարկվեց դիտարկել նաև ԱՄՆ-ն:	1190-Զբոսաշրջության զարգացման ծրագիր	Կատար Թասլակյան	28.03.2024	Քննարման մասնակիցը տեղեկացվել է, որ ԱՄՆ-ն (հիմնականում ԱՄՆ սփյուռքահայերի գործոնը հաշվի առնելով) թե՛ տարեկան ծրագրով, թե՛ մշակվող ռազմավարությամբ սահմանված է որպես թիրախային շուկա:	28.03.2024

5.	Առաջարկվեց ուշադրություն դարձնել նաև կոնտենտի ձևավորմանը՝ հաշվի առնելով, թե ցուցահանդեսներով և այլ տեղեկատվության տարածմամբ ի՛նչ ենք գովազդում, ստեղծել տեքստային բովանդակություն:	1190-Զբոսաշրջության զարգացման ծրագիր	«Տուրիզմի հայկական ֆեդերացիա» Մեխակ Ապրեսյան	28.03.2024	Քննարկման ընթացքում առաջարկի հեղինակը տեղեկացվել է, որ 1190-Զբոսաշրջության զարգացման ծրագրի 11002-Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը միջոցառումն արդեն իսկ ներառում է կոնտենտի՝ տեքստային բովանդակության ձևավորման բաղադրիչ:	28.03.2024
6.	Առաջարկվեց ընտրել հուշարձաններ, որոնք արժեք են ներկայացնում, սակայն համապատասխան ենթակառուցվածքների բացակայության պատճառով հետաքրքիր չեն զբոսաշրջիկների համար, և բարեկարգել, որոնք նաև կապահովեն կատարված ներդրումների ետ վերադարձը:	1190-Զբոսաշրջության զարգացման ծրագիր	«Տուրիզմի հայկական ֆեդերացիա» Մեխակ Ապրեսյան	28.03.2024	Քննարկման ընթացքում առաջարկի հեղինակը տեղեկացվել է, որ 1190-Զբոսաշրջության զարգացման ծրագրի 12001-Տեղական տնտեսության և ենթակառուցվածքների զարգացում, ապա նաև՝ 12002-Զբոսաշրջության և ենթակառուցվածքների բարելավում միջոցառումներով նախատեսված է պատմամշակութային հուշարձանների վերականգնում բաղադրիչը:	28.03.2024
7.	Առաջարկվեց աջակցություն նախատեսել Երևանի WFTGA միջազգային թրեյնինգ կենտրոնի	1190-Զբոսաշրջության զարգացման ծրագիր	«Տուրիզմի հայկական ֆեդերացիա» Մեխակ Ապրեսյան	28.03.2024	Առաջարկն ընդունվել է: Համապատասխան նյութերը ստանալուց հետո բյուջետային հայտում կկատարվի	28.03.2024

	պահպանության համար (աշխարհում կա 2 կենտրոն, որոնցից մեկը՝ Հայաստանում):				փոփոխություն:	
8.	Առաջարկվեց նաև կլաստերների ծրագրում ներառել այնպիսի մի կետ, տարածք, որը քիչ այցելվող, բայց մեծ պոտենցիալ ունեցող է:	1190-Զբոսաշրջության զարգացման ծրագիր	Անժելիկա Կանդարչյան	28.03.2024	Քննարկման ընթացքում առաջարկի հեղինակին ներկայացվել է հաստատված 20 կլաստերների ցանկը, որում ներառված են նաև զարգացման մեծ ներուժ ունեցող տարածքներ:	28.03.2024
9.	Վերջին մի քանի ամսում զբոսաշրջիկների լուրջ անկում ենք ունեցել: Արդյո՞ք պլանավորում ենք ավիաուղիների զարգացման ծրագիր /աջակցություն/:	1190-Զբոսաշրջության զարգացման ծրագիր	«Հայաստանի հյուրանոցների ասոցիացիա» Միքայել Մայրապետյան	28.03.2024	Քննարկման ընթացքում առաջարկի հեղինակը տեղեկացվել է, որ 1190-Զբոսաշրջության զարգացման ծրագրի 11002-Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը միջոցառումն արդեն իսկ ներառում է միջազգային ավիաընկերությունների հետ համագործակցության բաղադրիչ:	28.03.2024
10.	Քանի որ զբոսաշրջությունը բավականին զգայուն ճյուղ է, առաջարկվեց մշակել սթրես թեստեր երեք տարիների համար, որը կիրառվում է նաև բանկային համակարգի կողմից և հստակ ցույց է տալիս,	1190-Զբոսաշրջության զարգացման ծրագիր	Արայիկ Եդիգարյան	28.03.2024	Առաջարկն ընդունելի է, սակայն սթրես-թեստերի մշակումը ներկայումս ազդեցություն չի ունենա բյուջետային հայտում:	28.03.2024

	թե ինչ արդյունք կունենանք այս կամ այն իրավիճակի փոփոխության պարագայում:					
11.	Առաջարկվեց մարզերում տուրիզմի որոշ ուղղությունների /գյուղական տուրիզմ/ զարգացման տեսանկյունից նաև ենթակառուցվածքներին ուշադրություն դարձնել, որոնք թանկարժեք ներդրումներ են պահանջում:	1190-Զբոսաշրջության զարգացման ծրագիր	Արայիկ Եդիգարյան	28.03.2024	1190-Զբոսաշրջության զարգացման ծրագրի 12001-Տեղական տնտեսության և ենթակառուցվածքների զարգացում, ապա նաև՝ 12002-Զբոսաշրջության և ենթակառուցվածքների բարելավում միջոցառումներով նախատեսված է ենթակառուցվածների բարելավում:	28.03.2024
12.	Առաջարկվում է փոխել սուբսիդավորման տոկոսը, քանի որ բանկերը ավելացրել են տոկոսները, սակայն սուբսիդավորման տոկոսը մնացել է նույնը:		«Արարատի խաղողագործների միություն» ՀԿ Արսեն Սիմոնյան	29. 03. 2024	Կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի N 201-Լ որոշմամբ հաստատված Գյուղատնտեսական հումքի մթերումների (գնումների) նպատակով տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրով (այսուհետ՝ ծրագիր) իսկզբանե սահմանվել էր, որ վարկերը տրամադրվում են առավելագույնը տարեկան մինչև 12 տոկոս անվանական	29. 03. 2024

					տոկոսադրույքով, որի մինչև 9 տոկոսային կետը սուբսիդավորվում է: Հետագայում ֆինանսական շուկայում տոկոսադրույքների փոփոխությամբ ստեղծված իրավիճակով պայմանավորված Ծրագրին մասնակից ֆինանսական կառույցների կողմից 12 տոկոսով վարկի տրամադրումը դարձել է ոչ շահավետ և այդ պատճառով վարկերի տրամադրման վերին շեմ չսահմանվեց, որպեսզի մրցակցության արդյունքում ֆինանսական կառույցների կողմից վարկերը տրամադրվեն հնարավոր ցածր տոկոսադրույքներով: Ծրագրի շրջանակներում 2023 թվականին խաղողի մթերումների իրականացնելու նպատակով 37 շահառուից 30-ին վարկերը տրամադրվել են 11-ից մինչև 14 տոկոս տոկոսադրույքով, որոնց տոկոսադրույքները	

					սուբսիդավորվել են 9-ից 11 տոկոսային կետերով: Մյուս 7 շահառուների վարկերը տրամադրվել են 14.25-ից մինչև 16 տոկոսային կետով: Հարկ է նշել, որ Ծրագրի շրջանակներում տրամդրվող վարկերի վերադարձելիության ռիսկը կրում են ֆինանսկան կառույցները և շահառուները պետք բավարարեն ֆինանսկան կառույցների ֆինանսական (վարկունակության) պահանջներին: Չնայած դրան, շահառուների կողմից ներգրավված վարկերի սպասարկման բեռը նվազեցնելու նպատակով 2021-2022 թվականներին ներգրավված վարկերի մարման և արտոնյալ ժամկետները երկարաձգվել են: 2023 թվականին ներգրավված վարկերի մարման և արտոնյալ ժամկետները երկարձգելու մասին համապատասխան Կառավարության որոշման նախագիծը ներկայացվել է	

					Վարչապետի աշխատակազմ: Բացի այդ, Կենտրոնական բանկի կողմից վերսֆինանսավորման տոկոսադրույքի իջեցումը կարող է նպաստել նաև ֆինանսական կառույցների կողմից տրամադրվող վարկերի տոկոսադրույքների իջեցմանը: Հաշվի առնելով, ծրագիր իրականացման համար հատկացված սահմանափակ ֆինանսական ռեսուրսները տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման կետի փոփոխություն կատարելը գտնում ենք ոչ նպատակահարմար, որպեսզի ավելի շատ շահառուներ հնարավորություն ունենան օգտվել գործող աջակցությունից:	
13.	Առաջարկվում է մշակել գործիքակազմ, որ եթե տնտեսվարողը		«Արարատի խաղողագործների միություն» ՀԿ	29. 03. 2024	Այգին քանդող տնտեսավարողներին աջակցություն	29. 03. 2024

	ցանկանում է իր այգին քանդել, տրամադրվի մեկանգամյա աջակցություն:		Արսեն Սիմոնյան		տրամադրելու վերաբերյալ գործիքակազմ մշակելը գտնում ենք ոչ նպատակահարմար, քանի որ նման որոշում կայացրած տնտեսավարողները կարող են օգտվել գյուղատնտեսության ոլորտում իրականացվող պետական աջակցության այլ ծրագրերից:	
14.	Առաջարկվում է «Խելացի» անասնաշենքի ծրագիրը լրամշակել այն ավելի լիարժեք դարձնելու համար:	1187-Գյուղատնտեսության արդիականացման ծրագիր	«Հայաստանի տոհմային ոչխարաբույծների ասոցացիա» ՀԿ Տիգրան Չիտչյան	29. 03. 2024	Ներկայումս նախագիծը լրամշակվել է և գտնվում է ներքին շրջանառության փուլում:	29. 03. 2024
15.	Առաջարկվում է ստեղծել տոհմային կենդանիների ռեեստր՝ կիրառելով ԵԱՏՄ երկրների փորձը :	1187-Գյուղատնտեսության արդիականացման ծրագիր	«Հայաստանի տոհմային ոչխարաբույծների ասոցացիա» ՀԿ Տիգրան Չիտչյան	29. 03. 2024	Անասնաբուծության վարչության լիազորությունների շրջանակներում արդեն իսկ ստեղծվել է տոհմային կենդանիների ռեեստր և ԵԱՏՄ երկրների հետ իրականացվում են աշխատանքներ այն մոտարկելու նպատակով:	29. 03. 2024
16.	Առաջարկվում է հողային ռեսուրսները մաքսիմալ օգտագործել:	1022-Գյուղատնտեսության խթանման ծրագիր	«Էքսպերտ Յունյոն» ՀԿ	29. 03. 2024	ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից իրականացվում են մի	29. 03. 2024

			Իշխան Հովհաննիսյան		շարք ծրագրեր՝ մասնավորապես ինտենսիվ այգեգործության զարգացման, գարնանացան հացահատիկային, հատիկաընդեղեն մշակաբույսերի և բազմամյա խոտաբույսերի մշակության, գյուղատնտեսական նշանակության հողերի միավորման (կոնսոլիդացիայի) աջակցության ծրագրերը, որոնք ուղղված են գյուղատնտեսական նշանակության հողերի բերրիության բարձրացմանը և չօգտագործվող գյուղատնտեսական նշանակության հողերի շրջանառության մեջ ներառմանը:	
17.	Առաջարկվեց Բուսաբուծության զարգացման ծրագրի շրջանակներում օգտագործվող սերմը ֆերմերի կողմից ռեստրում գրանցված չլինելու պատճառով հիմք վերցնել	1059-Բուսաբուծության խթանում և բույսերի պաշտպանություն	Թաթուլ Ստեփանյան	29. 03. 2024	Բուսաբուծության աջակցության ծրագրով նախատեսված չէ Հայաստանի Հանրապետությունում օգտագործման թույլտվություն ունեցող սորտերի ցանկում չգրանցված սորտերով	29. 03. 2024

	փոխհատուցումը մերժելու համար:				ցանքի արգելք:	
18.	Առաջարկվում է արտակառավարչական մրցույթ հայտարարել տարբեր տեսակի վնասատուների և հիվանդությունների գծով ուսումնասիրությունների և պատճառները վեր հանելու համար՝ պարզելու այդ հիվանդությունների նկատմամբ դեռ նույն իրավիճակն ունենք, թե ոչ:	1059-Բուսաբուծության խթանում և բույսերի պաշտպանություն	Թաթուլ Ստեփանյան	29. 03. 2024	ՀՀ էկոնոմիկայի նախարարության «Գյուղատնտեսական ծառայությունների կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից յուրաքանչյուր տարի ոչ կարանտին վնասատուների և հիվանդությունների հայտնաբերման նպատակով մշտադիտարկվում են 180 000 հա գյուղատնտ. նշանակության հողատեսքեր: Միաժամանակ տեղեկացնում եմ, որ ՀՀ	29. 03. 2024

					սննդամթերքի անվտանգության տեսչական մարմինը մշտադիտարկում է իրականացնում կարանտին վնասատուների և հիվանդությունների հայտնաբերման նպատակով և կազմվում են վնասատուների և հիվանդությունների տարածվածության քարտեզներ:	
19.	Առաջարկվում է ոչ ստանադարտ օժանդակություն մեղվաբուծության ֆորումի/ մեղվի, մեղվամթերքների ցուցահանդես վաճառք/ կազմակերպման մասով:	1022-Գյուղատնտեսության խթանման ծրագիր	«Մեղվաբուծության Դարբնոց» գիտակրթական կենտրոն ՓԲԸ Տիգրան Սեդրակյան	29. 03. 2024	«Մեղվաբուծության Դարբնոց» գիտակրթական կենտրոնի կողմից Մեղվաբուծության Համահայկական Ֆորում կազմակերպելու նպատակով ՀՀ ԷՆ պատրաստակամություն է հայտնել աջակցելու ուղղությամբ:	29. 03. 2024